ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ 3860-ARM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ընթացիկ գործառնություններ)

(Մարդկային ներուժի զարգացման ընդլայնման ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ԱՄՍԱԹԻՎ 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019

ARM 51129

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Ընթացիկ գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ, ստորագրված 2019 թվականի նոյեմբերի 18-ին, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջև:

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԱՅՆ, ՈՐ

(Ա) ԱԶԲ-ն Վարկառուից ստացել է 2019թ. սեպտեմբերի 10-ի ամսաթվով թվագրված՝ զարգացման քաղաքականության վերաբերյալ փաստաթուղթ (Քաղաքականության վերաբերյալ փաստաթուղթ), որտեղ նախատեսվում են որոշակի նպատակներ, քաղաքականություններ և գործողություններ՝ նկարագրված սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 1-ում, և մշակված են զարգացնելու Վարկառուի կրթության և առողջապահության ոլորտները՝ շեշտադրելով ռազմավարությունների և ճանապարհային քարտեզների հզորացումը, ուսուցիչների մասնագիտական չափորոշիչների որակի և հիմնական ու միջնակարգ կրթության մասով ուսուցիչների վերապատրաստման բարելավումը, ֆինանսավորման և միջոցների հատկացման բարելավումը և կառավարման տեղեկատվական համակարգերի բարելավումը (Ծրագիր),

(Բ) Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին՝ Ծրագրի նպատակներով վարկ ստանալու համար, և

(Գ) ԱԶԲ-ն համաձայնել է Վարկառուին վարկ տրամադրել ԱԶԲ-ի սովորական կապիտալ ռեսուրսներից՝ սույն Համաձայնագրով սահմանված դրույթներով և պայմաններով,

ԱՅՍՊԻՍՈՎ՝ կողմերը համաձայնության են գալիս հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I

Վարկային կանոնակարգ, սահմանումներ

Կետ 1.01. ԱԶԲ-ի՝ 2017թ.-ի հունվարի 1-ի Ընթացիկ գործառնությունների վարկային կանոնակարգի (Վարկային կանոնակարգ) բոլոր դրույթները սույնով

դառնում են կիրառելի սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ՝ նույն ուժով և գործողությամբ՝ այնպես, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին սույն փաստաթղթում ՝ հաշվի առնելով, սակայն, հետևյալ փոփոխությունները.

ա) 2.01(tt) կետը հանվել է և փոխարինվել հետևյալով.

«Ծրագիր» եզրույթը նշանակում է ծրագիր, որի համար ԱՀԲ-ն համաձայնել է Վարկ տրամադրել, ինչպես նկարագրված է Վարկային համաձայնագրում. ընդ որում՝ այդ նկարագրությունը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել ԱՀԲ-ի և Վարկառուի միջև համաձայնությամբ:

բ) Վարկային կանոնակարգում «Նախագիծ» եզրույթը բոլոր դեպքերում պետք է փոխարինվի «Ծրագիր» եզրույթով:

գ) 2.01(vv) կետը հանվել է և փոխարինվել հետևյալով.

Ծրագիրն իրականացնող մարմին նշանակում է մարմին կամ մարմիններ, որոնք պատասխանատու են Ծրագրի իրականացման համար, ինչպես նշված է Վարկային համաձայնագրում:

դ) Վարկային Կանոնակարգում «Նախագիծն իրականացնող մարմին» եզրույթի օգտագործման բոլոր դեպքերում այն պետք է փոխարինել «Ծրագիրն իրականացնող մարմին» եզրույթով:

ե) 6.01(բ) կետը հանվել է:

Կետ 1.02. Վարկային կանոնակարգերում սահմանված եզրույթները, որոնք օգտագործվում են սույն Վարկային համաձայնագրում, ունեն Վարկային կանոնակարգերում սահմանված նշանակությունը՝ բացառությամբ սույն փաստաթղթում դրանք փոփոխելու կամ այլ համատեքստում կիրառելու դեպքերի: Սույն Վարկային համաձայնագրում գործածված մյուս եզրույթներն ունեն հետևյալ իմաստները՝

ա) Տեղական արժույթով համարժեք միջոցներ նշանակում է սույն Ծրագրի ներքո Վարկի միջոցներից ձեռավորվող տեղական արժույթ, ինչպես նախատեսված է սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 4-ի 4-րդ պարբերության մեջ.

բ) Դեպոզիտային հաշիվ նշանակում է սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 3-ի 3-րդ պարբերության մեջ նախատեսված հաշիվը.

գ) Իրականացնող մարմիններ նշանակում է հետևյալից յուրաքանչյուրը.

i) ԿԳՄՍՆ, որը պատասխանատու է սույն Համաձայնագրի

Ժամանակացույց 1-ի 2-րդ պարբերության (ա), (գ), (դ), (ե), (զ), (է) կետերում համապատասխան մասում նկարագրված բարեփոխումների իրականացման համար.

ii) ԱՆ, որը պատասխանատու է սույն Համաձայնագրի Ժամանակացույց 1-ի 2-րդ պարբերության (բ), (դ), (զ), (է) և (ը) կետերում համապատասխան մասում նկարագրված բարեփոխումների իրականացման համար,

կամ դրանցից յուրաքանչյուրի իրավահաջորդը, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար.

դ) Վարկային հատկացումների ձեռնարկ նշանակում է ԱԶԲ-ի Վարկային հատկացումների ձեռնարկը (ընդունված 2017թ., ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով).

ե) ԿԳՄՍՆ նշանակում է Վարկառուի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն.

զ) ՖՆ նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարարություն.

է) ԱՆ նշանակում է Վարկառուի Առողջապահության նախարարություն.

ը) Քաղաքականության մատրիցա նշանակում է Վարկառուի և ԱԶԲ-ի միջև համաձայնեցված քաղաքականության մատրիցա, որով սահմանվում են Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակներում իրականացված կամ իրականացման ենթակա գործողությունները, և որը կցվում է Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթին.

թ) Ծրագիրն իրականացնող մարմին՝ Վարկային կանոնակարգի իմաստով և դրա նպատակներից ելնելով՝ նշանակում է ՖՆ կամ դրա ցանկացած իրավահաջորդը, որն ընդունելի է ԱԶԲ-ի կողմից և պատասխանատու է Ծրագրի իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Կետ 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ ռեսուրսներից Վարկառուին տրամադրել ինը միլիոն հարյուր հազար եվրո (€ 9,100,000) չափով վարկ, և նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխանակման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի

2.06 կետի դրույթներին համապատասխան:

բ) Վարկն ունի մայր գումարի մարման 12 տարվա ժամկետ և վարկի արտոնյալ ժամանակահատված՝ համաձայն սույն կետի «գ» պարբերության.

գ) Սույն կետի «բ» պարբերության մեջ օգտագործված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է մայր գումարի առաջին մարման ամսաթվին նախորդող ժամանակահատված՝ համաձայն սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 2-ում սահմանված մարման ժամանակացույցի:

Կետ 2.02. Վարկառուն ԱԶԲ-ին վճարում է տոկոսագումար վարկի՝ ժամանակ առ ժամանակ առհանված եւ դեռևս չվճարված մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր Տոկոսագումարի վճարման ժամանակահատվածի համար հետեւյալի գումարին հավասար չափով.

ա) EURIBOR, և

բ) 0.60%՝ ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգի 3.02 կետով, հանած 0.10%, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգի 3.03 կետով:

Կետ 2.03. Վարկառուն տարեկան կտրվածքով վճարում է 0.15%-ի չափով պարտավորավճար: Այդ գումարը հաշվարկվում է վարկի ամբողջական գումարի նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած սույն Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60 օրվանից հետո:

Կետ 2.04. Վարկի տոկոսագումարը և այլ վճարները կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին:

Կետ 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված՝ Վարկի մայր գումարը վերադարձնում է սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 2-ում սահմանված դրույթներին համապատասխան:

Կետ 2.06. ա) Պարտքի խելամիտ կառավարման նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել Վարկի պայմաններում հետեւյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

i) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված եւ չծախսված, այնպես էլ չառհանված մասի Վարկի արժույթի փոփոխություն՝ որևէ այլ Հաստատված արժույթի,

ii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված,

այնպես էլ դեռևս չվճարված մասի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի բազայի փոփոխում լողացող դրույքից՝ ֆիքսված դրույքի, կամ հակառակը, և

iii) Վարկի ընդհանուր մայր գումարի կամ դրա՝ ինչպես առհանված, այնպես էլ դեռևս չվճարված մասի նկատմամբ կիրառելի լողացող դրույքի սահմանափակում՝ նշված լողացող դրույքի նկատմամբ տոկոսադրույքի սահմանային չափը հաստատելու կամ տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն չափերը սահմանելու միջոցով:

բ) Սույն կետի «ա» պարբերության համաձայն փոխարկման ցանկացած առաջարկություն, որն ընդունվում է ԱԶԲ-ի կողմից, համարվում է Փոխարկում, ինչպես սահմանված է Վարկային կանոնակարգի 2.01(զ) կետում, և այն ուժի մեջ է մտնում Վարկային կանոնակարգի V հոդվածի և Փոխարկման ուղեցույցների դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ III

Վարկի միջոցների օգտագործումը

Կետ 3.01. Վարկառուն ապահովում է, որ վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ սույն Վարկային համաձայնագրում սահմանված դրույթներին համապատասխան:

Կետ 3.02. Վարկի միջոցներն առհանվում են սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 3-ի դրույթների համաձայն: Նշված ժամանակացույցը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ Վարկառուի և ԱԶԲ-ի միջև ձեռք բերված համաձայնությամբ:

Կետ 3.03. Վարկային կանոնակարգի 9.02 կետում նախատեսված նպատակներով վարկի փակման ամսաթիվն է 2020թ. մարտի 31-ը կամ այլ ժամկետ, որը ժամանակ առ ժամանակ կհամաձայնեցվի Վարկառուի և ԱԶԲ-ի միջև:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պայմաններ

Կետ 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է կամ նպաստում է, որ կատարվեն սույն Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 4-ով սահմանված բոլոր պարտավորությունները:

Կետ 4.02. Որպես Վարկային կանոնակարգի 7.01 և 7.04 կետերում նշված հաշվետվությունների և տեղեկատվության մաս՝ Վարկառուն ԱԶԲ-ին է տրամադրում կամ ապահովում է, որ տրամադրվեն Ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթում նշված թիրախների իրագործմանը և գործողությունների կատարմանն առնչվող, ԱԶԲ-ի կողմից ողջամտորեն պահանջված բոլոր այդպիսի հաշվետվությունները և տեղեկատվությունը:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Կետ 5.01. Վարկային կանոնակարգի 10.04 կետի նպատակներից ելնելով՝ սույն Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվում սույն Վարկային համաձայնագրի ամսաթվից հետո 90-րդ օրվան հաջորդող ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Կետ 6.01. Վարկառուի ֆինանսների նախարարը հանդես է գալիս որպես Վարկառուի ներկայացուցիչ՝ Վարկային կանոնակարգի 12.02 կետի նպատակներից ելնելով:

Կետ 6.02 Սույն համաձայնագրով կամ վարկային կարգավորումներով այլ բան սահմանված չլինելու դեպքում, ցանկացած փոփոխություն պետք է իրականացվի և ապահովվի վարկային կարգավորումների 12.02 կետի համաձայն և պետք է պարտադիր լինի կողմերի համար ստորագրման պահից:

Կետ 6.03. Վարկային կանոնակարգի 12.01 կետի նպատակներով նշվում են հետևյալ հասցեները.

<u>Վարկառուի համար՝</u>

Ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, 0010
Մելիք-Ադամյան 1
Ֆաքս՝
(374 11) 800-132

<u>ԱԶԲ-ի համար՝</u>

Ասիական զարգացման բանկ
Ֆիլիպիններ, ք. Մանդալույոնգ,
1550 Մետրո Մանիլա,
ԱԶԲ պողոտա 6
Ֆաքս՝
(632) 636-2444
(632) 636-2424

ՎԵՐՈՆՇՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ սույն Համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճորեն լիազորված ներկայացուցիչների միջոցով, ապահովում են, որ սույն Վարկային համաձայնագիրն ստորագրվի վերը նշված առաջին օրվա և տարվա դրությամբ իրենց համապատասխան անուններից և հանձնվի ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ____
[անունը և պաշտոնը]

Ֆինանսների Նախարար

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

_____ՀՈՒԻՊԻՆԳ ՀՈՒԱՆԳ_____
[անունը և պաշտոնը]

Լիազորված ներկայացուցիչ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Ծրագրի նկարագրություն

1. Ծրագրի գլխավոր նպատակն է բարելավել Վարկառուի կրթության եւ առողջապահության ոլորտները:

2. Ծրագրի շրջանակը ներառում է հետևյալը. ա) ընդլայնել նախադպրոցական կրթության և բարձրագույն կրթության ու գիտության իրավական շրջանակը, բ) բարելավել առողջապահական ծառայությունները, գ) բարելավել նախադպրոցական հաստատությունների հասանելիությունը, դ) զարգացնել ներառական կրթության եւ առողջապահական ծառայությունները, ե) իրագործել կրթության ոլորտի մարմինների կառավարման և կարողությունների բարելավումը, զ) հզորացնել տվյալների օգտագործումը՝ կրթության եւ առողջապահության ոլորտների կատարողականի կառավարման եւ այն ռեսուրսներով ապահովելու համար հիմնավորումներ ստանալու նպատակով, է) զարգացնել կրթության եւ առողջապահության ոլորտների կայուն ֆինանսավորումը՝ 2020-2022 թթ. ժամանակահատվածի միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում, ը) բարելավել մարդկային կապիտալը հանրային առողջության քաղաքականությունների միջոցով, որի արդյունքում նվազում են ռիսկերը եւ մահացությունը երեխաների եւ երիտասարդության շրջանում: Ծրագիրն առավել մանրամասն նկարագրված է Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթում:

3. Ծրագիրը պետք է ավարտած լինի 2019թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Մարման ժամանակացույց

1. Հետևյալ աղյուսակում սահմանվում են Վարկի Մայր գումարի մարման ամսաթվերը և Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին վճարվող Վարկի ընդհանուր մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարը (Վճարման մասնաբաժին): Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկի միջոցներն ամբողջությամբ առհանված լինելու դեպքում Վարկի Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է ԱԶԲ-ի կողմից հետեւյալ կերպ. ա) բազմապատկելով Վարկի ընդհանուր մայր գումարը, որն առհանվել և չի վերադարձվել Մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ, բ) Մայր գումարի յուրաքանչյուր մարման օրվա դրությամբ Վճարման մասնաբաժնով. այդպիսի մարման գումարն ըստ անհրաժեշտության ճշգրտվում է՝ սույն ժամանակացույցի 4-րդ կետում նշված գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

Վճարման ամսաթիվ	Վճարման մասնաբաժին (տոկոսային արտահայտությամբ)
1 մայիսի, 2023	4.166667
1 նոյեմբերի, 2023	4.166667
1 մայիսի, 2024	4.166667
1 նոյեմբերի, 2024	4.166667
1 մայիսի, 2025	4.166667
1 նոյեմբերի, 2025	4.166667
1 մայիսի, 2026	4.166667
1 նոյեմբերի, 2026	4.166667
1 մայիսի, 2027	4.166667
1 նոյեմբերի, 2027	4.166667
1 մայիսի, 2028	4.166667
1 նոյեմբերի, 2028	4.166667
1 մայիսի, 2029	4.166667
1 նոյեմբերի, 2029	4.166667
1 մայիսի, 2030	4.166667
1 նոյեմբերի, 2030	4.166667
1 մայիսի, 2031	4.166667
1 նոյեմբերի, 2031	4.166667
1 մայիսի, 2032	4.166667
1 նոյեմբերի, 2032	4.166667
1 մայիսի, 2033	4.166667

1 նոյ եմբերի, 2033	4.166667
1 մայ իսի, 2034	4.166667
1 նոյ եմբերի, 2034	4.166659
Ընդամենը՝	**100.000000**

Ժամանակացույց 2

2. Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկի միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի Մայր գումարը որոշվում է հետևյալ կերպ.

ա) Մայր գումարի մարման առաջին ամսաթվի դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ ամսաթվի դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ սույն Ժամանակացույցի 1-ին կետով նախատեսված կարգով, և

բ) Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանման դեպքում այդ գումարները վերադարձվում են նման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն Ժամանակացույցի 1-ին կետի աղյուսակում սահմանված՝ Մայր գումարի տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական Վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկած՝ Մայր գումարի մարման բաց թողնված ամսաթվերից՝ բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը: Վճարվող նման գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են՝ սույն Ժամանակացույցի 4-րդ կետում նշված ցանկացած գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Բացառապես Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք Մայր գումարները հաշվարկելու նպատակներով Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները դիտարկվում են որպես առհանված և

չվճարված՝ առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ, և ենթակա են վճարման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին:

4. Անկախ սույն Ժամանակացույցի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներից՝ Վարկի Մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա մի մասը Հաստատված արժույթի փոխարկելու դեպքում այդպիսի Հաստատված արժույթի փոխարկված գումարի չափը, որը ենթակա է վճարման Փոխարկման ժամանակահատվածում ընկնող Վարկի Մայր գումարի մարման ցանկացած ամսաթվի դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ նշված փոխարկումից անմիջապես առաջ եղած արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ i) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից վճարվելիք՝ նշված Հաստատված արժույթով մայր գումարները, կա՛մ, ii) Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, եթե ԱԶԲ-ն այդպես որոշի Փոխարկման ուղեցույցների համաձայն:

5. Եթե Վարկի Մայր գումարի առհանված և չվճարված մասը ժամանակ առ ժամանակ արտահայտվում է Վարկի՝ մեկից ավելի արժույթներով, ապա սույն ժամանակացույցի դրույթները կիրառվում են Վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին՝ այնպես, որ յուրաքանչյուր նման գումարի համար ստեղծվի մարման առանձին ժամանակացույց:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 3

Վարկային միջոցների առհանումը

1. Բացառությամբ սույն ժամանակացույցով նախատեսված կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնության գալու դեպքերի, վարկային միջոցները հատկացվում են Վարկային հատկացումների ձեռնարկին համապատասխան:

2. Վարկառուն ԱԶԲ-ին է ներկայացնում Վարկային հաշվից առհանում կատարելու մասին դիմում, որը կազմվում է ԱԶԲ-ի համար ընդունելի ձևով:

3. ա) Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումն ԱԶԲ-ին ներկայացնելուց առաջ Վարկառուն նշում է ՀՀ կենտրոնական բանկի հաշիվը (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են Վարկային Հաշվից կատարվող բոլոր առհանումները: Դեպոզիտային հաշիվը բացվում, կառավարվում և փակվում է Վարկառուի՝ գործող կարգավորումների և ընթացակարգերի համաձայն:

բ) Դեպոզիտային հաշվի հետ կապված վարվում են առանձին հաշվեմատյաններ և գրանցումներ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքների համաձայն: ԱԶԲ-ի պահանջով Վարկառուն կազմակերպում է Դեպոզիտային հաշվի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումները, փորձառությունը և տեխնիկական առաջադրանքն ընդունելի են ԱԶԲ-ի համար, համապատասխանում են աուդիտի միջազգային ստանդարտներին կամ ԱԶԲ-ի համար ընդունելի՝ դրանց տեղական համարժեքին: Դրանք կազմելուց անմիջապես հետո, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան ԱԶԲ-ի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու ամսաթվից 6 ամիս հետո, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների կարծիքները տրամադրվում են ԱԶԲ-ին՝ անգլերենով:

4. Վարկային միջոցներ չեն առհանվում սույն ժամանակացույցի առդիրում նշված որևէ հոդվածի ֆինանսավորման նպատակով:

5. Վարկառուն կարող է առհանել Վարկի գումար սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո:

Չթույլատրվող ծախսերի ցանկ

Վարկային միջոցների առհանում չի կատարվում հետևյալի համար.

i) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք ներառված են Միավորված ազգերի կազմակերպության Ստանդարտ միջազգային առեւտրի դասակարգման 3-րդ Փոփոխության (ՍՄԱԴ, Փոփ. 3) հետևյալ խմբերում կամ ենթախմբերում, կամ ՍՄԱԴ-ում ցանկացած հետագա փոփոխությունների արդյունքում ներառման ենթակա խմբերում կամ ենթախմբերում, ինչպես նշվում է ԱՋԲ-ի կողմից Վարկառուին ուղղվող ծանուցմամբ.

Աղյուսակ. չթույլատրված ապրանքներ

Գլուխ	Բաժին	Ապրանքների նկարագրություն
112		Ալկոհոլային խմիչքներ
121		Չմշակված ծխախոտ, ծխախոտի թափոններ
122		Մշակված ծխախոտ (ծխախոտին փոխարինող նյութ պարունակող կամ չպարունակող)
525		Ռադիոակտիվ նյութեր եւ դրանց հետ կապված նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր՝ մշակված կամ չմշակված
718	718.7	Ատոմային ռեակտորներ եւ դրանց մասեր, ջերմարտադրող տարրեր (քարթրիջներ), չճառագայթվող՝ ատոմային ռեակտորների համար
728	728.43	Ծխախոտի մշակման սարքավորումներ
897	897.3	Ոսկերչական զարդեր՝ ոսկու, արծաթի կամ պլատինի խմբին պատկանող մետաղներից (բացառությամբ ժամացույցների եւ ժամացույցների պատյանների), եւ ոսկերիչների կամ արծաթագործների աշխատանքներ (ներառյալ տեղադրված թանկարժեք քարերը)
971		Ոսկի, ոչ դրամական (բացառությամբ ոսկու հանքանյութի եւ խտանյութերի)

Աղբյուրը՝ Միավորված ազգերի կազմակերպություն:

ii) ծախսեր Վարկառուի արժույթով կամ այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են Վարկառուի տարածքից,

iii) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք մատակարարվում են այնպիսի պայմանագրի շրջանակներում, որը ֆինանսավորելու է կամ համաձայնել է ֆինանսավորել որեւէ տեղական կամ միջազգային ֆինանսական հաստատություն կամ գործակալություն, ներառյալ՝ ԱԶԲ-ից ստացված որևէ վարկի կամ դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած պայմանագիր,

iv) ծախսեր այնպիսի ապրանքների համար, որոնք նախատեսված են ռազմական կամ ռազմականացված նպատակների համար կամ որպես պերճանքի առարկաներ օգտագործելու համար,

v) թմրանյութերի համար ծախսեր,

vi) ծախսեր շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը եւ ներկրումն արգելված են Վարկառուի օրենսդրությամբ կամ միջազգային այնպիսի համաձայնագրերով, որոնց կողմ է հանդիսանում Վարկառուն, և

vii) ծախսեր Վարկառուի կողմից արգելված որեւէ վճարի հաշվին՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության VII գլխի համաձայն ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի որոշման:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 4

Ծրագրի իրականացում և այլ հարցեր

Իրականացման կազմակերպում

1. ՖՆ-ն հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմին և պատասխանատու է Ծրագրի ընդհանուր իրականացման, այդ թվում՝ քաղաքականության բոլոր միջոցառումների հետ համապատասխանության, միջոցների հատկացման և գրանցումներ վարելու համար: ԿԳՄՍՆ-ն և ԱՆ-ն հանդիսանում են Իրականացնող մարմիններ, որոնք պատասխանատու են Ծրագրի շրջանակներում իրենց համապատասխան բաղադրիչների իրականացման համար:

Քաղաքականության միջոցառումներ եւ երկխոսություն

2. Վարկառուն ապահովում է, որ Քաղաքականության վերաբերյալ փաստաթղթում և Քաղաքականության մատրիցայով սահմանված՝ Ծրագրի շրջանակներում ընդունված բոլոր քաղաքականության միջոցառումները շարունակեն ուժի մեջ մնալ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում և դրանից հետո:

3. Վարկառուն իրազեկում է ԱԶԲ-ին՝ օգնություն տրամադրող բազմակողմ եւ երկկողմ այլ կազմակերպությունների հետ քաղաքականության վերաբերյալ այնպիսի քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա, եւ ԱԶԲ-ին տալիս է այդ քննարկումների արդյունքում քաղաքականության վերաբերյալ ստացված բոլոր առաջարկների մասով դիտողություններ ներկայացնելու հնարավորություն: Մինչեւ այդպիսի որևէ առաջարկի վերջնական տարբերակի մշակումը եւ իրականացումը, Վարկառուն հաշվի է առնում ԱԶԲ-ի տեսակետները:

Տեղական արժույթով համարժեք միջոցների օգտագործումը

4. Վարկառուն ապահովում է, որ Տեղական արժույթով համարժեք միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համահունչ՝ որոշակի ծրագրերի եւ գործողությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով:

Կառավարում եւ հակակոռուպցիոն գործողություններ

5. Վարկառուն, Ծրագիրն իրականացնող մարմինը և Իրականացնող մարմինները պետք է՝ ա) համապատասխանեն ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն

քաղաքականությանը (1998թ., առ այսօր կատարված փոփոխություններով) և ընդունեն, որ ԱԶԲ-ն իրեն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով հետաքննելու Ծրագրին առնչվող ցանկացած ենթադրյալ կոռուպցիոն, խարդախություն, դավադրություն կամ հարկադրանք պարունակող գործելակերպ, եւ բ) համագործակցեն այդպիսի ցանկացած հետաքննության մասով և տրամադրեն նման հետաքննության բավարար կատարման համար անհրաժեշտ աջակցություն:

Մշտադիտարկում եւ վերանայում

6. Վարկառուն ապահովում է, որ ա) Իրականացնող մարմինները կատարեն պարբերական վերանայումներ՝ Ծրագրի շրջանակը, իրականացման կազմակերպումը, առաջընթացը, ձեռքբերումները և ազդեցությունները գնահատելու նպատակով, և բ) ՖՆ-ն պատասխանատու լինի Ծրագրի մշտադիտարկման բոլոր տվյալները վարելու և ծրագրի օգուտները գնահատելու համար: ԱԶԲ-ի կողմից Ծրագրի կիսամյակային վերանայումները դյուրացնելու նպատակով Վարկառուն պետք է ժամանակին տրամադրի կրթության և առողջապահության ոլորտների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն այնպիսի մանրամասնությամբ, որը կարող է ողջամտորեն պահանջվել ԱԶԲ կողմից: Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը համակարգող մարմինը և իրականացնող մարմինները դյուրացնեն Վարկի առհանման հաջորդող 12 ամիսների ընթացքում պլանավորված՝ ԱԶԲ-ի վերանայման առաքելությունը և համագործակցեն վերջինիս հետ, կրթության և առողջապահության ոլորտների շարունակական զարգացումը խթանելու համար անհրաժեշտ կամ ցանկալի համարվող հետագա բարեփոխումների և միջոցառումների, այդ թվում՝ Քաղաքականության մատրիցային համապատասխան համաձայնեցված հետծրագրային շրջանակային ցուցանիշների վերանայման և քննարկման նպատակով:

7. Վարկառուն ապահովում է, որ Իրականացնող մարմինները վերանայեն և հաշվետվություն ներկայացնեն Ծրագիրը համակարգող մարմին՝ իրենց մասով Ծրագրի համապատասխան բաղադրիչների նպատակների շրջանակի, իրականացման կազմակերպման, ազդեցության և ձեռքբերման մասին, որպեսզի Ծրագիրն իրականացնող մարմնին տան ԱԶԲ-ին ներկայացվող իր հաշվետվության պահանջները կատարելու հնարավորություն՝ համաձայն սույն Վարկային համաձայնագրի պայմանների:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մարդկային ներուժի զարգացման ընդլայնման ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն